

Յակոբ Կաթուղիկոս՝ մի քան զմի յաջորդող եւ յաճախող ձախորդութիւնքը տեսնելով՝ եւ ժողովրդեան կրած դառն վշտաց համար յանհնարինս վշտացած՝ սիրան կրճմլուէր, սակայն հաղի յաջողեցաւ իշխանաց նախանձոտ եւ գրգռուած յուզումնը զիջուցանել եւ ժողովուրդը ընդ զօրականս սիրով եւ միաբանութեամբ ոգեւորել եւ արքային հնադանդ կալոյ յորդորել, որով կուս վառուած զինուեցան թշնամեաց դէմ եւ երկիրը պաշտպանեցին թշնամեաց յարձակումներէն եւ ասպատակութիւններէն: Այս եւս կարեւոր եւ մեծ գործ էր:

Ի 1287 թուականին գիտնական Յակոբ Հայրապետն վախճանեցաւ, եւ ի վերջոյ՝ կոստանդին Բ. Պրօնաֆորժ յաջորդեց ի Հայրապետութիւն Հայոց:

(Երանանքէլ)

ՎԱՆՔԱՍ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՆԿԱԿԵՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԱԼՈՒՅԸՆԱԳՐԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆ.

«Փառք սրտագիտին եւ ծածկագիտին Եստուծոյ, եղիցին շնորհք նորա ընդ լաւադոյնս յարարածոց եւ յատկապէս՝ ընդ ընտրեալն ի միջոյ մարդկայինս ազգի՝ ի վերայ վերջնոյն ի մարդաբէից, քաւչեմեղաւորաց, հրտմանատարի մարդկան եւ ողւոյ չարաց՝ ի վերայ Մահմէտի որդւոյ Եպտուլասի եւ ժառանգաց նորին, շատնայ՝ հօր շիւսէյնի եւ Ելի՛ն որդւոյ Եպտուպիոյայ՝ ներկայացուցչի Մահմետաւ-

կանաց — ուղղափառաց՝ եւ ի վերայ սրբոց սերնդոյ նորին ցորչափ արեգակն եւ լուսին լուսաւորեն եւ ցայգ եւ ցերեկ անընդհատ հողովմամբ զիրեարս փոխանակեն յախտեանո ժամանակաց:

Եւ արդ՝ պատճառ յօրինման սորին այսր արձանագրոց (շարեւոր) այն իսկ է, զի Մեծափառ, Մեծիշխան, հռչակաւոր, բարձրաստիճան եւ բարձրապաշտօն մեծ Ալիգիրն՝ մերձաւոր մեծի թագաւորին եւ սիրելին մեծի տէրութեան, զլեւաւոր խորհրդականն պետութեան եւ հաւատարմատար թագաւորութեան, արժանաւորն ամենայն զրուտեաց պատուականութեամբ ծաղման իւրոյ Եմիր Առւստամ Եմիր—Միշիկինէի՝ որդի Եմիր Սիբատայ վաճառեաց պատուականագունին յազանց քրիստոնէից, պաշտպանին աղքատաց եւ չքաւորաց՝ Պատրիարքին Լշմիածնի Վրիգորի որդւոյ Պարօնի Ղալպ բէկի Գահրուլտօրվա՛յեան յամենանն Բապիուլասնի ի 835 ամին զքանի մի հողարածինս ի ստորե յիշատակեալս, զորս յետ ընդունելոյ ընդ իւրովն տիրապետութեամբ հանդերձ այլովք բոզանդակ կալուածովք իւրովք նըւիրիոց Անուց Լշմիածնի առ ի գործադրել զընկալեալ ի նոցանէն արդիւնս ի պահպանութիւն համայն հոգեւոր ուխտի այնր վանից:

Գնեալ կալուածքն են հետեւեալք:

1. Եմբոզ գիւղն Լշմիածին որ ի շարձանին Կարբուոյ նահանգին Արեւանոյ յաշխարհին Եարպատական, որ ունի սահմանըս, նախ՝ սահմանակից է ձանապարհին Երզրումայ, երբորդ՝ Վիւ թափայի, երբորդ՝ դատարկալայի եւ չորբորդ՝ Ղիմ-

ձինս յորջորջեայն հողոյ՝ հանդերձ ամենայն կալուածովք և պարագայիւք որք են, յարմար և անյարմար դաշտիւք, լեռամբք և բլրակօք, անտառօք, աղբերքք և առուակօք, քարամբք և քարանձաւօք, ձմերանոցօք և մուրգօք, տնտեսիւք և այգիօք, ջրօգացիւք և հնձանայարիօք, ջրհորօք, բաց ի մզկիթաց, գերեզմանատանց և ձառնապարհաց՝ որք չմտանեն ի կալմութիւն վաճառման, նոյնպէս և կալուածոց ամանց մասնաւորաց անձանց պատկանիոց՝ ընդ 90000 դենարի*) (դահեկանի) Խսկէնսերեան դրամահատութեան՝ որոց կէսն լինի 45000 դենար : Աւաճառումն այս կղև ընդ ձեռն է արիւտի պահպանելով զկարգ ընթերցման սրկոյ համաձայն պայմանաց ստուգութեան վաճառմանն առանց որ և է խարդախութեան, և ընթերցումն սրկոյ հիմնեալ եղև ի վերայ կանոնաց մահմետականացն է արիւտի :

2. Ամբողջ զիւզն Աշտարակ ի նորին շրջանի Կարբուոյ նահանգին Արևանայ, որոյ սահմանք են, նախ գետակն՝ որ ընթանայ ընդ Օշական, երկրորդ՝ հովիտն ընդ արձակ, երրորդ՝ Քիզըլ — Թափա, չորրորդ՝ Գարաշայ՝ հանդերձ ամենայն պարագայիւք որպէս ի վեր անդր ասացաւ :

(*) Երբեմն բնորդ դահեկանի տեղ այսինքն 40000 էր (1 փարայն 3 ստակ է) կամ 6 կոպէկի փոխարէն գործածուած է ի նախնիս :

Իսկեռեբեան բնորդն 33 կոպէկի կամ 5 դահեկանի չափ (մի Փրանքէն աւելի) արժէր ունենալ կկարծուի :

Իսկ թէ ի՞նչ է արժաթեայ և ոսկեայ դնարն և ի միմեանց որքան տարբերութիւն ունին հասկանալ դժուարին եղած է :

քաւ ի մզկիթաց, գերեզմանատանց և մասնաւորացն կալուածոց՝ ընդ 150000 դենարի Գավրիթեան արծաթոյ, որոյ կէսն լինի 75000 դենար, պահպանելով զկարգ շարիւտի ի մասին ստուգութեան գնման և վաճառման և ընթերցման սրկոյ առանց խարդաւանաց :

3. Ամբողջ զիւզն Փաթրինջ ի Կարբուոյ շրջանին Արևանայ նահանգին, սահմանօքս, նախ գերեզմանք Թաթարաց, երկրորդ՝ Տապալ — Գազիւր աւձայնեալ հողն, երրորդ՝ ջրանցն Վիզըլ Թէյմուր, չորրորդ՝ ի շայ լեզու Անարատ վերաձայնեալն սահման՝ հանդերձ ամենայն պարագայիւք ըստ ի վեր անդր ասացելոյն առանց գերեզմանատանց, մզկիթաց և կալուածոց մասնաւորաց՝ ընդ 170000 ոսկեոյ դենարի Գավրիթեան դրամահատութեան, որոց կէսն է 85000 դենար, պահպանելով զկարգ շարիւտի ի մասին գնման և վաճառման և ընթերցման սրկոյ առանց խարդաւանաց :

4. Ամբողջ զիւզն Կորագաւիթ՝ որ փտանի ի շրջանի Գըրգորեւիայ նահանգին Արևանայ, որ նախ՝ սահմանս ունի հովեան Արագու, միւս հովեան Գառնեոյ, երրորդ՝ գերեզմանատունն առ երի հնոյ քաղաքին, և չորրորդ՝ դաշտն Գարակիւլ հանդերձ ըստ ի վերոյ ասացելոցն ամենայն պարագայիւք՝ առանց կալուածոց մասնաւորաց՝ ընդ 60000 դենարի Գավրիթեան դրամով՝ պահպանելով զկարգ շարիւտի ի մասին գնելոյ և վաճառելոյ և ընթերցման սրկոյ զսիկայն առանց խարդաւանաց :

5. Ամբողջ զիւզն Աղաւնատուն ի Կարբուոյ շրջանի, որոյ սահմանքն, նախ՝ հողն Աւանտաղեան, երկրորդ՝ ձառնապարհն

Տարբերութիւն մի Թ. Խ. Բ. տարբ.

Արդրումի, երրորդ՝ Հին Ճանապարհն որ տակի ի Թալին, չորրորդ՝ Հին գերեզմանք մահմետականաց հանդերձ ամենայն պարագայիւք՝ քաւ ի մզկիթաց և կալուածոց մասնաւորաց՝ ընդ 50000 դենարի Պավրիթեան արծաթադրամով, որոց կէսըն բարկացուցանէ 25000 դենար՝ պահպանելով զկարգ շարիատի՝ որ յաղագս գնելոյ և վաճառելոյ և ընթեռնելոյ զսիկայն առանց խտրութեան:

6. Գիւղն Վանիս — Գիրաճը Արրանեան (Վարանեան) շրջանի նահանգին Արեւանայ սահմանօքս, նախ՝ լեռն Գառնուոյ Առուգ, երկրորդ՝ սահման Պաճաղիստան, երրորդ՝ Ճանապարհն ընդհանուր, չորրորդ՝ Ակն աղբեր (.) հանդերձ ամենայն պարագայիւք առանց մզկիթաց և գերեզմանատանց՝ ընդ 70000 դենարի Պավրիթեան արծաթադրամոյ, որոյ կէսն լինի 35000 դենար՝ պահպանելով զկարգ շարիատի որ յաղագս գնելոյ և վաճառելոյ և ընթեռնելոյ (զսիկայն) առանց խտրականաց:

7. Գիւղն Մուլնի ի Պարբուոյ շրջանի Արեւանայ նահանգի հանդերձ յայտնի սահմանօք և պարագայիւք առանց մասնաւորացն կալուածոց, մզկիթաց և գերեզմանատանց՝ ընդ 55000 դենարի, որոց կէսն լինի 27500 հանդերձ պահպանութեամբ շարիատեան կարգին որ վասն զընելոյ և վաճառելոյ և ընթերցման (սըկոյ):

Վաճառողն զոյգ ընդ ամին բերանացի հաստատեաց զստուգութիւն ընդունելոյ իւրոյ զամենայն դրամն լիովին 630000 դենար քանակութեամբ, և գնողն ծանոյց զընդունելութենէ ընդ իւրով տիրապետութեամբ զգնեալն կալուած, յորում

ժամանակի վերստին ընթերցաւ սիկայն, յետ որոյ բովանդակ կալուածքն անդառնալի սեպհականութիւնք են գնողին, զորս անբռնադատ կամօք Պատրիարքն Գրիգոր նուիրեալ է յօգուտ վանուց, վասն այսորիկ ոչ վաճառողն և ոչ ժառանգք նորին յետ այսր չունին իրաւունս ինչ ի վերայ վաճառեալ կալուածոցն, որ մնալոցն է ընդ տնօրէնութեամբ յիշեալ Պատրիարգին մինչև ցմահ նորին. իսկ յետ մահուանն՝ անցանէ ի տնօրէնութիւն փոխանորդաց իրաւանց նորին ի նոյն վանս արժանահաւատ հոգեւորականաց:

Ի ճակատ կալուածագրոյ գտանի վաւերացուցումն նախագահի հոգեւոր շարիատին Գազի Մուլա Ախմետի գտուգութենէ վաճառման և գնման կալուածոցն այնոցիկ է:

(S. 4.)

Հայոց Պաթուղիկոսութիւն՝ երկար ժամանակ աստանդական թափառելով իւր նախկին վայր աստ ի Ս. Լճմիածին վերահաստատուելէն զինի՝ ի 1443 Փրկչական թուականին ի տեղի Աիրակոս Հայրապետի նստող Մակուեցի Գրիգոր Ժ. Պաթուղիկոս Պարօն - Նալալ - բէկ Պահրիւտովայեանն շարունակելով Ս. Լճմիածնի վերաշինութեան՝ և ըստ նիւթական պիտոյից կարեւոր եղած եկամուտները կազմելոյ և յարդարելոյ մեծ գործը վերեւ հրատարակեալ կալուածագրոյն մեջ յիշատակեալ էօնն Բիւրջայք կգնէ և նոյն կալուածագրով աւելի կապահովէ:

Ազգային Պատուութեան ծանօթ եղող ներուն քաջայայտ պիտի լինին Հայրապետական Տան իսկզբանէ հետէ ունեցած

